

ատաեալ) Առաքելական Եկեղեցւոյ վերաց մի ոյլ անուն կցել, որպիսին յատուկ է ի բուն արմատոյ հերձեալ և հերետիկոսցեալ աղանդաւորաց խմբից միայն:

Ե վերջ բանիս կամփոփեմ յօդուածս,
զի ցորչափ և այստանի այց Առաքելական
Երկեղեցին սկզբնաւորեալ և հաստատեալ
է ի Քրիստոսէ ի ձեռն Առաքելոցն Խռա-
դեսսի և Շարթուղիմեսսի, և առաւելա-
պէս և ընդհանրածաւալ պայծառացեալ
է ի ձեռն Ո. Գրիգորի Պարթևի, աննե-
րելի մեղք է իրրե աղանդաւոր ցուցանել
և Գրէդուրէան կոչել կամ թէ ի վերջն
գարս նօրամուտ Լուսաւորչէան կամ Եշ-
մաժնական բառից սովորութեան առանց
ուշադրութեան հետեւ, նա մանաւանդ
զայն թարգմանելի Գրէդուրէան՝ բոլորովին
սխալ է: Եւ ի՞նչ հարկ կայ սոյնպիսի
անուն գնել և այսոց և սոցա Երկեղեցւոյ
վերայ:

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՐ,

ՊԱՏՄԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՀՈՐԴԻԿԻՔԻՆ

$$(\tilde{v} = \mu - \lambda - \xi - \eta_1 \eta_2)$$

卷之三

Ա շ ա ն շ ա ր ի ւ ճ ք. Ճ ողդրվական նոխապաշտումն ի մերաց անտախտին. — Կերպարանափոխութիւն. — Ծնունդ Միհմին Ազեր սանդրի. — Այլ Դանծուց առ Երևանաւ. — Զինէական աւանդութիւն դպարմառութենէ Հեռավայրութեան:

Յարութիւն Արտվեան ասէ, ժանտախտն է պատիմ պատուհանի ծանր յանցանաց մարդկան, երևան յիս իւրաքանչյիր եօմն ամաց առաջ

նորա ընթանան երկու հեծեալ ու ցասմածողք...
մի ի նոցանէ զգեցեալ լինի ի հանդերձ կարմիր,
ունեղով ի ձեռին և կարմիր մահակ. միւն ի
սեան, կրեղով և մահակ սեաւ. յորժամ մաս-
նեն ի քաղաքս կամ զենզու զայն՝ որ նախ հան-
դիպի նոցա ստիպէն առաջնորդել ինքեանց ի
տունս և նմա միայն երեխն. իսկ այլոց ոչ բնաւ.
մուեալ ի տունս՝ մահակօքն նշան առնեն մարդ-
կան և կենդանեաց. եթէ նշանեաց այն՝ որ ի հան-
գերծ սեաւ, մահու է այն. իսկ թէ որ ի կարմի-
րըն՝ կենաց: Հանին իմ՝ կին ճշմարտախօս՝ պատ-
մեր, թէ յաւուր միում ծանօթն մեր եմուս ի
տուն մեր, և ոչ զօք ողջունեալ, լոիկ և տիտուր
եկաց յանկեան ուրիշ. որչափ հարցմաւնս արա-
բին, ոչ միշյն պատասխանեաց. եղին առաջի նո-
րա կերակուր, և առանց նորաւն ձեռաց ի նա
միսելց ծախեցան. յետ այնորիկ յարեաւ յան-
կարծակի այրն և ել ի տանին անխօս: Խոկ յոր-
ժամ՝ յետ ժամանակի ի վերաց անցանելց հար-
ցին ցն ո զիրացն, պատասխանի արար թէ փըր-
կեցայք ի վտանգէ մահուան. ցասմածողք ո
ստիպեցին զիս առաջնորդել նոցա ի տունս ձեր,
և տեսեալ զբարեսիրտ շարժմաւնս և ընտանեկան
ուրախութիւնս ձեր, ասացին. վես և ոչ մի հա-
սուսցուք հիւրասէր տանս. և ի ցցց սիրոյ կերին
զհաց ձեր և ելին ի գեղջէն: — Աւամիկ ժողովը-
գականք Առուսաց, Լեհացիք, Սելլք, (և թուրիթէ
նաև Սլաւեանք առ հասարակ) երեակային զժան-
տախան ի նմանութիւն կնոջ, անուն տուեալ նմա
«Սերբիյ կուղ»: Յաշխատութեան մերում՝ ի
վերաց Առուսատանի, մասն Բ, երես 412: առա-
ցեալ է թէ, այսպէս կերպարաննեն և զիսոլերացն
(մարձայութութիւն). տեսե՞ր զիսոլերացն,, հար-
ցանէ մալարոս ոմն ցընկերն, որ գառնայր ի Պոնէ:
«զիարդ ոչ տեսից...» — «յորպիսի կերպարան և
նմանութեան տեսեր զինա,, . — «ի կերպարանս
կնոջ, որ ունէր յոտս կարմիր կօշիկու ընթանայր
ի վերաց ջրոց. և անզադար թառաջ արձակէր. .
Հեն - Լեհացի մոտիապաշտութիւնն երեակայէ
զնախընթացն կամ զառաջնորդ ժանտախտի ի վե-
րաց երկանիւ սայլի. ի մոտանել ասեն ի շէնս ինչ,
եթէ զոյի անդէն բացեալ լուսամուտ կամ տուն,
ապառէ ի նա ոճենին իւր եսումիւ թառեննական

հանդերձ և բնակիչք տանն պնդորիկ մես անխն. ի մերձնեալ ժանտախտին ամենեքին ամրափակեն զառուս իւրեանց այլ երբեմն նուազութիւն պաշարուց հարկէ բանալ զգուռու Ազնուական ոմն թէ և ուներ պաշար աւորց բազմաց բայց կամեցնեալ տալ զանձն իւր մրկանս փոփոխակ բաղմաց բանաց զլրւամուտն. յորժամ մահաբերն երկայնէ ի ներքս զնեան, նա իսկցն հատանէ ուսերաւ զնեան նորաւ և յայնմ հետէ անհետացաւ ժանտախտն ի միջոյ:

Բ. Ավագ քույշուց ու կը լուսն:

Կանայք ոմանք ի պատճառս ծանուց յանցանց պատժին փոփոխմամբ մարդկութեան ի գոյշնին բարս և բնութիւնս և կերպարանս, որ տեէ զամն եօթն. և այս այսպէս յանցաւոր կոտըն երեի ի զիշերի անմարմին էսկ ինչ և տալով նմա զմորթ զայլնի, հրամայէ զգենուլ. յայնմ հետէ ամենայն յատկութիւնք և բարք միշտակեան զարմնի հանդին ի վերայ նորաւ. իսկզբանն զիշտակալ լափէ զորդիս իւր զինի զազգակցացն, ստկաւ առ ստկաւ և զալոցն. ի մերձնեալ նորա փակեալ դրունք տանց բնդնին բանին, զայս մորթ զգենու ի զիշերի, իսկ ի տունջեան զաղեալ զգուշութեամբ, փոխի զարձեալ յառաջին կերպարանն. Դէպ եղեւ երբեմն առն միում տեսանել զի զայլն առեալ փախուցանէ զմանուկ մի. սկսանի զչու պնդել նորաւ, այլ ոչ կարացեալ հասանել, ի միւսում առաւտօտուն զչեսու կալեալ արեանն հեղլոյ ի ձանապարհին, եղիտ զայրն ապաստան փոխարիեալ զաղանին, յորում և մորթ նորաւ. Հուր անդանօր լուցեալ առն, ընկենու ի նա զմորթն. և աշա յական քմթել երեեալ կոտըն զայրագին աղաղակաւ և կատաղութեամբ մեծաւ յարձակի ի կորզել զգիշերական զգեստն իւր, այլ այրն արգելու նմա. յորժամ փոշեանաց մորթն, ընդ ծիսյն աներեւութեանց և կինն:

Գ. Կնունշ մեծէն Աղեւանուրբէ:

Մեծն Աղէքսանզը որդի էր ոչ Փիլիպպոսի, այլ երևեի կախարդի միշյ. Աս ի պատերազմել իւրում զէս եղէ զի եկն ի Հայաստան, և լուեալ թէ բնակի ի վերայ Արարատայ ծերունի մի գու-

շակ ապագայի, զնաց ի տես նորաւ և եշարց, որ զու ես իմաստունն այն, զորմէ հռչակ հասեալ է յընդհանուրս. ասա ինձ ուրիհմն որպիսի՞ մահուամբ մեռանելոց ես դու . . . և նա ասէ, « պատմմամբ յորդոցս ձեռանէ . . . Աղէքսանզը զայրացեալ ընդ բանմն՝ եշար զնա սրով, որ ընդ վերջին հառուաչն ասէ, « Քու արդարեւ որդի իմ ես . . . և պատմեաց զգազանիս ծննդեան նորաւ:

Գ. Այր քույշուց ու կը լուսն:

Ի մեկնին իմ յերեւանայ՝ Արովեան ուղեկցեաց ինձ ցոստաջին իջեանն, « Ապրանքափուր . . . և պատմեաց ինձ թէ, ըստ աւանդութեանն ի մերձակայ լերին գտանի այր մի առանձին. մուտ նորա անցայտ ումեք. այլ միայն բանի յորշեալ ժամանակաւոցն. Դէպ լինի զիւղացւոց ուրումն զրաստու հանդերձ անցանել առ լիրամբն. տիսեալ զպատառուած մի ի նա, որ տեներ յայրն գանձուց, մտանէ ընդ այն. և երժեալ գտանէ կոյսու ոսկւոյ և ականց պատուականաց. որովք լցեալ զըեւն զրաստուն արտափս եղանէ. այլ մատցեալ զփայտ ձեռին իւրոյ յայրի անդ գտանայ առնուլ զայն. սակայն տես դու, զի ժամանակ բացման այլին լըացեալ զոլով, փակին զրունքն և մնայ ի ներքս անտես ումեք յայնմ օրէ մինչ ցարդ. իսկ զրաստն առեալ զհարստութիւնն բերէ ուղղակի ի տուն տեսան իւրոյ:

Ե. Զինեւին ու ունդուն կույշուրբէ նիւնէ հիւնէ բունքունեան:

Փողի ի ձանապարհորդին իւրում մուեալ յաւուր միում ի զիւղ մի, չըրաւ ի տուն կնազ միոյ ի զիշերել. « կարեմ ընդունել առ իս զամենայն աստանզականն (ասէ կինն), և վայելուչ է անուան աղնուաբարց կնոջ, երթ ի բաց . . . յետս զարձեալ անտի զնայ առ աղքատ կին ուն. վերջինս ընկալաւ զնա արախութեամբ, և եգ առ ուղի նորաւ զոր ունեին ի տան, հաց, և կամձն, արկին նմա և անկողին ի ննջել. և կինն նստեալ զգիշերն ոզջցին, արար նմա շապիկ մի կտաւեայ և յառաւեօտուն ընծայեաց նմա. իրրեւ նախաճաշիկս ինչ արար Փողի, յուղի էարկ զնա կինն, որում տուեալ զմասցես բարեաւն, ասէ առա-

շին ձեռնարկեալ գործդ երկարեցի ցերեկց; Պարձ արարեալ կնոջն ի տուն, կամեցաւ զիտել թէ որչափ ինչ է մնացորդ կոտաւոյն սկսաւ չափել, և ոչ եղիտ զվախճանն, զայս տեսիալ գրացի կնոջն, եղ ի մոի զգուշանալ միւսանգամ յայսպիսի դէպս, անցեալ ի վերայ քանի մի ամսոց, տեսանէ միւսանգամ զնոյն աղքատ եկեալ ի գեօդն, զնաց ընդառաջն նորա և աղաչէ ագանիլ առ նոսա, և նա յանձն առնու, տես այժմ՝ որշափի հիւրասիրէրն զնա, յառաւ օտուն մատուցանէ նմա նախաճաշիկ, և շապիկ մի յառաջազոյն պատրաստեալ, միայն զգիշերն ողջոյն թողու ի ննջարանի իւրում զվառ ճրագ, զի օտարականն համարեսցէ թէ նստեալ տքնի ի կար շապիկ. իրրե յուղի ել ֆողի, ուղեկցեաց նմա կինն, որում զարձեալ ըստ առանոյն տուեալ զողջոյն մնացես բարեաւից ասէ. երկարեցի առաջն գործդ: Պարձ արարեալ ի տուն, խորհեր զկոտաւոյն և զբազմանալոյ նորա. այլ իրրե լոէ զըսուաչ կովուն, ասէ. և երթաց նախ արրուցից նմա զջուր, իրրե սկսու ըսուլ զջուրն ի դաշտն, հեղաւ ջուրն անհատաբար և ելից զտունն և զդուռն, մինչ կնոջն հազիւ զերծեալ ի ջրահեղձն կորստենէ:

ԴՀԱ-Ի Թ.

Վերադարձ ի Տիփիս. — Երթ առ Օսեիթ. — Գաղթականութիւն եւ պատմութիւն նոցա. — Քրիստոնէութիւնն ի նոսա. — Նուրիբական անտառ. — Այր Ս. մարգարէնն նոյայի. — Զոհք. — Սովորութիւնը Օսեիթաց. — Սնուրիսապաշտութիւնն. — Աղօթք. — Եւսք հարսնենկանք. — Պասկ անհավանա որդուց եւ ծնունդ նորին անքարայականութիւն. — Աշխատափիրութիւնն կանաց. — Ժառանգական արտօնութիւն. — Բաժմանումն ժողովրդեան. — Ազնուութիւն. — Քրէժ արեւոն. — Հիւրասիրութիւն. — Տուարտածութիւն. — Գծաբարութիւն (Ֆիզիոնմի) զինաց. — Կրութիւն մարմնոց. — Նմանութիւն նոցա ընդ գարմանացիս. — Կերակուր. — Հանդերծ. — Յարդին սորա զծնող նւ նախնիս. — Լեզու. — Երգ. — Աւանդութիւնը նոցա եւ Արաց. — Քաղուած ի բանից Գիւրուա զը Տօնպիրի, զնոցանէ:

Ի 29 Օդոստոսի ելեալ յերեանայ, յ30 նորին մուտ կալայ ի Տիփիս. և յառաջներրորդ աւուր Սիստեմիերի ընդ Հայ. Հռովմէական դոքտոր Սարալովի գէմ եղեալ առ Օսմեթս, հասաք ի դիւզն Խնարս-Ռւպանի, ուր ընկալան զմեզ մարդասիրուէն ի տուն այրի կնոջ միոյ, և ետուն մեզ բաղդմէ հանդէպ վառարանի և ջեռուլ, Անդ հետ զիստ ժողովնեցան կուտեցան բնակիչք զեղ-

ջըն. և թարգման ունելով իմ զգոքտոր Սարալովի, պէսպէս հարցմունս ուղղեցի առ նոսա. ուրոց ամենեցուն ընկալայ պարզ և ինդքսմիտ պատասխանիս:

Ոմանք ի բնակչաց նստեալ եին ի վերայ աթուոց, և ոմանք կանգուն յոտին բռորաձև, իսկ շատը յանդուլ շարժմանս, և կանայք շուրջ զվառ արանաւ ի հոգի կերակրոց. այլ այսու ամենայնիւ լուութիւն թագաւորէր անդանօր խորին, խօսէր միայն՝ առ որ հարցումն լինէր, ի ձայն մեղմիկ ես փոյթ կալեալ էի մտազիւր ի զիր զրոշմել մատիտաւ ի տետրակ յիշտակի զամենայն բանս նոցա. և այս չէր ինչ ընդդէմ նոցա և անսիտրժ. այլ նաև ի զկայ առնույն իմ, հարցանէն ցիս երբեմն. հասու եղեր խօսից մերոց: Ոչ կասկածիմ ի ծշմարտութիւն պատմելոցն նոցին, բայց և չիշնեմ ստել. զոր ինչ ես լուայ, վերաբերեցի ընդհանրութեան ազգին, նախնի ճանապարհորդը զտին մեծ նմանութիւն և համաձայնութիւն ծիսից և սովորութեանց երկուց ազգաց. Օսսեթաց և Գերմանացւոց. և իմն ժողովեալ տեղեկութիւնք՝ յուսամ նոր ապացուցութիւնք ծշմարտութեան իցեն զրելոց նոցին, Պ. Շ. Լամթեր Զուիցերիացի եկաց ի մէջ նողային Թամաթաց մինչև անգամ ի ծառայութիւն մտեալ առ նոսա. և զարմանալի եռանդեամբ, և հասուն խոհականութեամբ զիստ եղեալ ժողովեաց անվորէպ տեղեկութեամբ մէն մի մանր ծէսու, սովորութիւնս և եղանակս առտնին և ժողովրդական կենցաղավարութեան նոցա. վաստակ նորա ընդ համեստ վերնազրովս և Հատուածք ի ճանապարհորդութիւնէ ի հարաւայինն Մուօփա ի 1822 ամեց 1828 ամեն, կարէ լինել զաղափար տոշման զրութեան. ցանկալի էր թէ երիտասարդ Գերմանացին յանձն առնոր բնակիլ քանի մի ամս և ի մէջ Օսսեթաց, որով տալոց էր ընտիր և հետաքրիստոնէութեան տեղեկութիւնս ի լոյս Գերմանական պատմութեանն և հնախօսութեանն:

Օսսեթք շատ և շատ յարգեն զեկեղեցիս և զվանորայտ զորս բազումս է տեսանել ի նոսա, այլ աւերակս, շինութիւն նոցա թագուհւոյն տան Արաց Թամարայ յամն 1171, յ1195 որ ըստ տակոյ նոցա էած ի նոսա զբիստոնէու-

թիւն, Սոքա բազում՝ անգամ՝ ի կիր առնուն զնշան խաչին, զօ. ի տեսանելն զառաջին եղբարալուսինն, զերես առ նա ուղղեալ դաշտւնաւ ի մէջ օդոյն զնշան կնիքեն խաչին. պատպէս և նուիւրականս ընդունին զաստեղս ցոլացեալս յերկնա, անուանեալ զնոսա և Զուարատեկտի,՝ այն է խաչ թուուցեալ:

Յորժամ՝ պատրաստեցաւ ընթրիքն, եղին առաջի մեր ցած սեղան, արկին ի վերայնորասփուոց զարդարեալ կապոյտ նկարուք. նախ քան զամենայն ետուն յանօթ փայտեայ զմամթան, ի պէտս որոյ պաշտէին փայտեայ զրգալք, իսկ մոյն՝ սովորական սպասք սեղանոյ. յետ նորա մաստուցին ի սեղանն համեղաճաշակ խմորեղին (հաղմայ) կազմեալ սպանրով, իւղով և սոխով. այս ամենայն անծառնօթք միւս ազգաց Կովկասու, յուշ առնեին մեզ զուլորութիւնս Գերմանիոյ կամ գէթ ասել Եւրոպիոյ, ընդ որ մինչ անգամ և Թ. Ասրալով գրաւեցաւ, ծնունդն Կովկասեան, որ միայն զօրոս ամ՝ կեցեալն էր ի Գերմանիա. Սենեակն յորում էաք՝ լուսաւորիւր որպէս սովորաբար տնակք Ռուս շինականաց, պատրուգաւոր Ճրագովք յորմն վարսելովք:

Սոքա ոչ թէ անուանեն զինքեանս Օսսեմո, այլ և Իր և կամ և Իրօն և զչայրենիս իւրեանց և Իրօնիստան, 2երբեզք՝ կոչին զոսա և Պաշշալուք, Թաթարլուք՝ Օսս, և Թավլի, Աեկզէք, Օց, Օցէ, Վ.իրք, Օսսի, կամ Օվասի, զծայմանէ, պատմութիւնէ և գաղթականութիւնէ ոսցա գտանէր նուազ իմն աւանդութիւն առ նոսա, ընդ որս խօսեցայ. Ասեն թէ Օսսեմք ընակէին յառաջ յայլ երկիր սյն է յայժմեան 2երբեզիստան, այլ հարստահարեալք յօւտար ազգաց, գաղթեցին եկին յոր այժմ են՝ երկիր. այս անորոշ և մթին աւանդութիւն ունի ապաքէն զապատմարանական հիմն. այս և պատմազիրք Վ.րաց յայտ առնեն թէ սոքա փոխադրեցան յայսոսիկ կողմանս յեղեց Դոնայ. և Պլուղոմէս անուամբս Օսսիս կարգէ ընակիչս ի բերանս Դոն գետոյ և իրի թէ նոքա շինեցին զնոպի. Դոն ի լեզու Օսսեմաց նշանակէ ջուր կամ գետ. բազմաւատ զետք կամ առուակք Օսսեմիոյ ընդ անուանցն կրեն միշտ զբառդ յիշատա-

կեալ. զօ. Փայնազի - զօն, Պ.զըլ - զօն, Խարզարի - զօն, Զերեգ - զօն, և լու Զարմանք թէ զիսրդ Բիւզանդեանք ոչ խմացան զանունդ Օսսեմ. անդուր մէք հանվիպիմք դմին անուան, առ նոսա և Արան, է յորջորջումն: — Կոստանդիին ծիրանաւծին անուանէ զվանս զրացիս Սոււանոյ (Ավանետաց). Քուլպիկվիստ կրօնաւոր ԺԳ դարու մի և նոյն ազգ զնէ զնլանս և զնսս:

Ասեն թէ Օսսեմք ունէին յառաջ զչիւսիսային կողմանս և զչովիստ Կովկասու, զմեծն և զփոքն Կարարդ ուր և թագաւորութիւնն էր նոցին. այլ ի ԺԳ դարու ձնշեալք ի Բատու խանէ ամրացան ի լերինս Կովկասու:

Պատմիչք Վ.րաց դնեն զՕսսեմք զրացիս իւրեանց նա և յաւուրց անտի մեծին Աղեքսանզրի թերես աւանդութիւնն զբաղմականութիւնէ նոցա ի հիւսիսոյ յերկիրս յայս վերաբերի ժամանակաց միաւորութեան Գերմանացի աշխարհակալաց ընդ բուն Օսսեմաց: Եղեալքն առ իս զայսափի ինչ միայն կարացին պատմել թէ, յաւուրց արքացին Վ.րաց Վ.ախմետանկայ Վուրդ Աղանայ թագաւորէր Օսսեմաց Բաղատար, որ մարտ ես ընդ Վ.ախմետանկայ մինչև ցՄերեմ. ուր յանցանեն երիւսարին ընդ գետն Կուր, սպանու ի նմանէ (ի Վ.րաց արքայէ):

Առ Վ.իրս պատմի թէ, արքայ Վ.րաց Վ.ախմանէ Վուրդ Ասլան հար վանեաց զՕսս, և սորան զերկուս մեծամեծ զօրագլուխս նոցա զՉաղատար և Բաղատար, որք կոչեցին զնա ի մենամարտութիւն Գիւրուա հատ. Բ. երես 362. ի մէջ բերէ զուշադրութեան արժանազրութիւն եկեւ զեցւոյն Մուզուզ ի վերաց Լասսարեան զրանց ի լցու ընծայեալն զառաջինն ի Ժո-Շառ Աղեքնի, Հակոբ 1830. հաստատութիւն վերոյդեալ պատմական անցից. և Մեր Էպր ինն եղբարք ի ցեղէն Զարզուիձէ — Ճարիսեան Օս Զալատար Դաւիթ - Սողկան, որք ատելութեամբ բերեալ առ թշշնամիս, մարտ եղաք ընդ չորից թագաւորութեանց, Փիդարոս, Զադարոս, Սակուր և Գէորգի. երեքն յեղբարց մերոց նուիրեցին զանձինս ի կրօնաւորութիւն ի ծառացութիւն Քրիստոսի. մէք տիրապետազքս անձուկ ճանապարհի ընդ որ անցանեն ի չորից կողմանց, ի Լասսար

ունիմք ամիոց և մաքսաֆուն, և իշխամբ ամսոր տեղեաց. յուսարութ ի վարձարութիւն անափ կինոց, թէ յաստի զարժանուոր կինցալ յարցիք. առկի և արծաթ առ մեզ պապէս զջուր, և ընդ իմով իշխանութեամբ արկի զազգս կովկասու, և զրաւեցի զերիս տէրութիւնս. ըստ իւմոյ ստվարութեան ածի զքոյր արքային Քարթալինեացի (Վրաստանի). Նա նենգեաց ինձ երդմանի, և յանձն իւր երարձ զմեզս իմ. Քաղաքար անկաւ ի ջուր, և զօրք Օսսեթաց կոտորեցան, որ ընթեռու զայսասիկ բանս, աղօմս արացէ վասն իր.

Մասն ինչ Օսսեթաց անուամբ Քրիստոնեաց քեն^{*)} և իր հետեղք Յունական եկեղեցոյ, այլք ոքք իւսահման Զերքեզաց համարին Մահմետականք. սակայն ի կրօնիցս և ոչ մին արմատացեալ է ի նոսա. ամենկին զրեամբէ հակամէոք ևն և պաշտեալք ի կոտաշշական սնութիս. ունին նուիրական համարեալ անտառս, և սեղանս ի նոսա, ուր ի նուեր հանեն հաց և միս ի ձախոմ Ալբատիկաւկազայ առ լերամբն Յուլակերայ գտանին երկու այլք, երեւելազոյնն ի նոսա առ Լամփտոն զիւղեւ որ ի հնումն պատկանէր ցեղին ո՞նաբան չերեւելոյ այժմ ի միջի, և ասիթէ նարտ ասացեալքդ Հրեայք էն. այս այս յանուն Ա. մարգարէին Եղիսյի ակնածելի է ի նոսա իբրև պաշտպան նոցին. ի շրջակայս նորաթագործէ անվորով ապահովութիւն. անվեսս հովուին հօտ օչխարաց զի չիք աւազակութիւն ի տեղւողան սրբութեան. և նոցին աւանդութիւնն ասէ. թէ մի յերեւելի անձանց Օսսեթաց զերեվարեցաւ յօտար աշխարհ, իսկ արծուի մի առեալ անցուցեալ զնա ընդ լայնատարած ծովս և բարձրաբերձ լերինս էած կացոց մերձ յայրն սրբազն. արմէ հետէ ուխտիւք եղ ի մոխ ծառացել Ա. Եղիսյի. և այս ապաստորութիւն ածանցաւ ի յետագայս նորա. երէցն ի նոսա միանգամ ի տարեաջն զգիցեալ զեւրագործն հանգիրձ, մասնէ. յայրն միշտակեալ, կատարէ անդ զառաեւ ծէս օրբազան համարեալ նուիրաբերու-

(*) Այս յօսութաց որք ուսեն զիստենին համարին Քըստանույք. իսկ որք գարեւնն, Ա. 2.

թեան, ներքին կողմն այրիս այսորիկ իր թէ կաղմալ է ի զմրուխտ քարեաց. ի միջն նորա զց սեղան քարեայ, ի վերսց նորա ոսկի բաժակ լի զարեջրով. մտեալն ի նա Քահանայ ստանացնորհս մարգարէանալոյ ի միւսում ամի, յորքամ դարեջարն՝ որ յոսկի բաժակի եռայ և հեղանի արտաքս ընդ անօթն, նշան է խաղաղութեան և արգասաւորութեան երկրին, իսկ թէ ոչ պատիւրազմի և սովոր, ի միւսում աւուր ի գեօդ. Էամիգոն տօնախմբութիւն լինի միծ, յորում գտանին համօրէն մերձարենակք. ի ժամանակի ուրախութեանս սպասաւոր այրի Ա. Եղիսյի հրապակաւ ծանուցանէ զապագայ տարւոցն. բաց աստի Օսսեթաց ունինական զանազան նուիրական տեղին յանտառս՝ ուր հանեն նուերս, հաց միս և ձուկն, և ունիք զնենեալ այծս զմրիթս նոցա առ կախն դժանոց^{*)}. Կիսաքրիստոնեայքն ի նոսա զգուշութեամբ պահպանեն զպահս Քրիստոնէից. և զոհագործութիւն նոցա լինի յւեադ շաբաթու, որ յայտնապէս յառաջ եկեալ տեսանի յերացականէն օրինաց. զենուն զօշխարն, և երիցագոյնս պարեալ աղօմս ի վերայ մացն բաժանէ նոցա. իսկ զսկերս և զմորթն այրեն. Թէ արդարէ կրօն նոցա խառն է ի Քրիստոնէութիւնէ և ի Հրէակառնութիւնէ յայտ անտի է զի սովա զշաբաթն ըստ Հրէից անուաննեն Սարաթ, և որպէս ի Կիւրակէի, այսպէս ի նմին աւուր ոչ ծածկն զզուխս իւրեանց.

Օսսեթը յիւրաքանչիւր նշանաւոր տօնի զոհս զոհն որիշ որիշ, ի նոր տարւոջ զիսոչ և Ռընըդեան՝ այծ, ի զատկին՝ օչխար կամ զպոն, ի տօնի Միքայէլ հրեշտակապետի զիկն. առաւելքան զամենեսին յարգեն զօրիեսին սուրբա, զմարգարէն Եղիսյ, զըրեշտակապետն Միքայէլ, զԱ. Գէորգ, և զԱ. Նիկողայոս— Տեսի ի Տփիսիս զճանապարհութիւն Կօփայ ի հարաւային մասին Թռափայ, և ի նմին մասն Ա. երես 292, բանս

(*) Յորժամ Ա. Կունի յամի 423 եած ի Վիլս զքրիստոնէութիւն, ետեւ զի անդամոր սովոր են դանել կռոց զմորգիկ, չափ եղեալ ճպանէ չափ բառնալ զնեթ անսուսկան սովորութիւնն, սահմանեաց նոցա հանել ի զոհ փոխանակ մարդկան ԴՀ խոր և զայլ սուրբ կիստանիս Հ.

Հետաքրքրականս զՕսմեթաց, յորում և օրինակ աղօթից նոցա, զոր ահա և մեք օրինակեմք ի բան մեր.

Ա. Աստուած զթա ի մեզ աղաշեմք, և ողորմեան

Է. Առորդ Գէորգ, խնդրեմք ի քէն, օգնեա մեզ և ողորմեան

Ք. Մայր Աստուծոյ, աղաշեմք սղորմեան:

Դ. Միքայէլ և Գայորիկէլ, ողորմեցարուք մեզ:

Ե. Եկեղեցիք ի լերինս ողորմեցարուք մեզ:

Չ. Նարի Ա. Գէորգ, ողորմեա մեզ:

Ւ. Բարձրագոյն լերինք Օսմեթի, առաքեալք և հրեշտակք որք նատէքդ ի վերայ նոցա՝ գովարանեմք և խնդրեմք ողորմել մեզ.

Ձ. Եկեղեցիք Վ. բաց, ողորմեցարուք մեզ, ողորմեցեն և ամենայն ազգք, որք շուրջ զմեօք:

Ղ. Քրիստոս ողորմեա մեզ:

Խ. Աստուած բարեգութ օգնեա մեզ ըստ արդարութեան քում:

Կօլ զիտողութիւնս առնէ, թէ յաղօթս յայս չեք ինչ ասացեալ ի Ա. Երրորդութիւնն. բայց յայս է թէ հաւասան ի նա, ըստ որում բազում են ի նոսա աւերակք եկեղեցեաց յանուն Ս. Երրորդութեան. ունին սպա զիօթնեակ քրիստոնէական պահոց, զիւրակէն անուաննն օր Աստուծոյ. յիրկուշարաթու և յուրաթու անհնար է ըստ նոցա սկիզբն առնել նոր գործոյ. նախապաշարումն, որում հանդիպիմք յաճախ և յեւրոպա:

Մնուիապաշտը են Օսմեթք. զոն առ նոսա զուշակք, հմայք և հաւահարցք, որք ի յափրշտակեալ կամ վերածեալ վիճակ մտեալ, պատմեն մերձակայիցն զապազայ նոցա. յորժամ ի նոսա զողանայ ոք զիր ինչ, առեալ զգուշակն երթան ի տուն այնորիկ. յոյր վերայ տարածի կասկած, որոյ առեալ ի ձեռին զկատու մի, առէ ցկարծեցեալ զողն. Ա եթէ զու առեր զայս ինչ և չգրածուցանես տեսուն իւրում, կատուս այս լիկեց և չարչարեց է զհողիս նախնեացդ քոց և հարկ է զիսել, զի զողն զգողօնն անդրէն ի տեղի իւր գարձուցանէ. եթէ չիք կասկած ի վերայ առանձին անձին ումեք, զայս ասելով շըցի տանէ ի տուն, և այսու եղանակաւ զրեամէ միշտ

գտանի զողացեալն: Կատուն շունն և էջն առեալ են առ նոսա ի կախարդական կենգանիս. եթէ ոք պահանջու ունի յաւմեքէ, կամ անարդիս և թշնամանեալ չկարէ զիոխարէնն դարձուցանել: տարեալ զկատու, կամ զշուն կամ զէշ սպանանէ ի վերայ գերեզմանի նախնեաց թշնամացն առ սեղով վասն հոգեց այս ինչ և այն ինչ ու բուքու. և յայնժամ հոգի յիշատակելոցն ննջեցելոց փախարիկին ի զենեալն կենդանիս, եթէ ժառանգն կամ ազգականն նոցա ոչ շահեցէ զմիրտ վշտագնեցյն: Կարի մեծ յարգանս նուիրին զերեզմանացն նախնեաց իւրեանց յարեամուտու ուղիեալ. ի վերայ գերեզմանացն արկաննն մեծամեծ քարինս, իսկ ի զուլն կողմն զբառանկին քար վեց և ութն ոտնաշափ բարձրութեամբ. զուղեորութեան կարդ կատարեն հանդիսիւ մեծաւ, զին և ձին հանգուցելցյն առ ձեռս աղոց. զի զձին ոյլ ոք օչ կարէ ի կիր առնուլ, և կինն չունի իրաւունս առն երթալ այլում, Կայծակնահարն սուրբ համարի առ նոսա: և ի նմին տեխլոց թալին զնա՝ յորում եւ հարն, աղաղակելով ուրախութեամբ ունկ եղիա, իշխող ժայռիցու. զի համարեն թէ մարգարէն Եղիա նոյն հետայն էառ զնա առ ինքն. և երթան յուստ և յիրկրպագութիւն զերեզմանի նորա. որպէս զառաջնու այրից Ա. Եղիայի, սապէս և գերեզմանի սոցա կախնեն մորթու սեաւ այծու:

Հարսանեկան սովորութիւնք և կարգք սոցա են. նախ՝ եթէ կենդանի է հայրն կամ երեց եղբայրն կամ արենակիցն փեսային՝ զնայ առ ծնողս աղջկանն և յայտնէ զդիտաւորութիւն իւր. թէ հաւանեցեն նորա, հարցանեն և զմիտս աղջկան, զորց իւրեւ առնուն հաճութիւնն, գայ ապա վեսայնի ի տուն նոցա, և նշանազրեն զնա. անդ զգինըն վճռեն զաղջկանն, որ է սովորաբար կով, եղն, և զէնք, հաշանելիք հօր կամ եղբօր աղջկանն. յաւուր հարսանեաց՝ զայ փեսայն ի տուն հարսին ուղեկցութեամբ աղգակցաց և մերձաւուրաց, ուր և սեղան կազմեն նոցա հրձուանաց. ի միւսում աւուր զնոյնն առնեն ի տան մերձաւուր զրացւոյն և այլոց ի բովանդակ շէնն, ապա ածէ

զհարսն ի տուն իւր, զոր յանձն արարեալ յառաջնորդութիւն բարեկամաց, ինքն (փևայն) յառաջէ սակաւ ինչ: Ի պատահել նմա առ զրան տանն ջահիւք լուցելովք, ապա ածեալ զհարսն ի ներքո, երից շրջեցուցաննն զվառարանաւ, և տարեալ բազմեցուցաննն ի բարձր տեղով, զան ժողովին համօրէն կանայք գեղջն, և պարագիւկալ զհարսն, երգս երգին կարգաւ պէսպէս մինչ ցառաջախօս հաւուն, զամենայն ժամանակս զայսոսիկ հարսին չիք բնաւ իրաւունք խօսեց, իրեւ հաւուն խօսի, մանուկ մի մերձեցեալ առնու ի զիսոյ նորա գքօղն, պատառէ յերկուս բնդ մ.ջ, և զմասունսն կապեալ ի փայտ ինչ, ասէ. «ինն ուստերս, և մի դուստր, յետ այնորիկ ամենեւ քին բազմին զվեղանով, և հարսն ելանէ սպասաւ որել նոցաւ, ճանաչեալ սյսունէնու տիկին տանն, սյու ամենայն և այլ այսպիսի ծէսք տան մարդոյ երեակայել զինքն յանկիւնս Գերմանիոյ:

Օսսեթք սովորաբար ունին զմի կին, սակաւ երբէք զերկուս, վերջինս տեսանի յառաջեալ յազգեցութենէ Մահմետականաց. վասն զի բնաւորութիւն ազգին և այլ սովորաւթիւնք նորա Ճերոպականն ակնարկին միակնութիւն. առ սուսա ազատութիւն է երկուց սեռից ընդ միմեանս յարարերութեանց, զոր ոչ տեսանեմք յայլ ազգա Կովկասու:

Որպէս առ Հայո, նոյնպէս առ Օսսեթս նորապակ հարսն մինչև ցառաջին ծնունդ, իսկ եթէ ամուլ, մինչև ցչորորդ ամ հարսնութեանն, բաց յառնէ եւրմէ ընդ այլս ամենինին խօսի նշանացի: Ընդհանրապէս վատարաննն զբարս կանանց Օսսեթաց. բայց այս յառաջ եկեալ է ի վատթար սովորութենէ, կամ լաւ ևս ասել՝ յեղենագործութենէ անտի, որով խանգարի ընտանեկան և մակրմական մաքուր կենցաղավարութիւն, այն է, հայրն զըրելքտասանամեայ կամ վեշտասանամեայ աղջիկ՝ կին ածէ վեցամեայ կամ ութնամեայ որդոյ իւրում, և յայտնի է ապաքին ոչ վասն որդույ իւրոյ, այլ վասն իւր ինքեան ածեալ է հայրն (գուցէ յիրաւի և ոչ հայր) զիինն կատարելուհասակ. ընդ որում կենակցեալ, ծնանի օրինակի աղագաւ արու զաւակ, և նա նոյնպէս զեռ ոչ վեցամեայ ութամեայ, և ահա հայրն ըստ

անուան կին ածէ նմա դարձեալ չափահաս, և բնակակցի ընդ նմա. այսպէս և պղ չարիք բառ զումք: Սոքա զառանձին իմն զգացմունս ունին զիրաւանց ամուսնութեան, որդի, որ ծնանի յետ ամուսնութեանն՝ և իցէ թող յապականութենէ արեան (ի մերձաւոր արենակցաց) կամ ի պողն կութենէ, համարի օրինաւոր ժառանգ իրաւանց և անուան անմեղ հօն. — կին՝ որ յետ ամուսնութեանն ծնաւ որդի, զինի մահուան առն իւրոյ չկարէ երթալ օտարի, զի գնեալ է և համարի սեպհականութիւն առաջեն զերդարտանին. միայն սկեսրայր կամ տազր նորա, այն է հայր և եղբայր հանգուցելոյն կարեն ամուսնալ ընդ նմա. և այս պարտաւորութիւն իսկ համարի առ նոսա, իսկ թէ թողին յետինք զաւակունս, առաջնոյն համարին *): Եթէ հանգուցեալ այրն չունի զհայր կամ զեղըայր, կամ յառաջագցն վախճանեալ նն, և այրին ունելով որդի՝ պարտի մնալ ի տան նորա մինչ ցվախճան, ազատ է առնել յարաբերութիւնս ընդ կողմնակի անձինս, և ծնեալքն ի նոցանէ համարին դարձեալ օրինաւոր որդիք մեռեալ ամուսնոյն. Օրինակ այսպիսի առաջ մեր էր, տանտիկինն, առ որում ազանեալ էաք, այրի էր. այր նորա թողեալ երիս դստերս, իսկ ուստր և ոչ մի վախճանեալ էր զինդ ամօք յառաջ, բայց կինն ունէր ի զիրկս միամեայ զաւակ, որ զանուն կրելով հանգուցելոյ հօն, համարէր և ժառանգ տան նորա և ընչից. ներհակ սորին, երեքին հարազատ զատելքն չհամարէին ժառանգք հօն, և պարտէին վաճառել յօդուտ անարին եղբօրն. — Իսկ թէ այրին չունի զաւակունս և կամ ի լինել առն պղում, յօդժամ որ կամի առնուլ զնա ի կութիւն, պարտի վճարել զերդաստանին հանգուցելոյ առաջնորդն ծնողաց նորա. ժառանգ ընչից և տան առն համարին արու զաւակք. իսկ դատերք վաճառին յօդուտ զերդաստանին չհամարեալք ի ժառանգս. — Սակաւ երբէք տեսանի

(*) Յայտ է թէ յերբայական օրինաց անտի առեալ են զայս սպարութիւն, որ պատուիք սենել զիին եղբօրն, թէ մեռանիցի անզաւակ:

առ նոսա բաժանել առն և կնոջ ի միմեանց, և այն վասն յայտնի անհաւատարմութեան. յայս պիսի գէսս ի զարձուցանել առն զկինն ի տուն հօր նորա, ստանայ զկէս դինն զստերն նոցին ի տանէ անտի.—Կանայք Օսոեթաց, միանգամայն իշխանք են ի մէջ տանն, գոզջիր և ի վերայ աւրանց *). բայց և յոյժ աշխատասէրք. հնձեն զմոտ, տանին զցորեան յաղորիս, բերեն յանտառաց զփայտ և ոմանք հերկեն նաև զդաշտու:

Ի մեռանել առն՝ կինն կառավարէ զտունն մինչեւ յարբունս հասանել որդոցն, որ պարսի յայնմշետէ հոգալ զսիտոյս կենցաղավարութեան նորա. այս ամենայն յայնապէս զԳերմանացւոցն ցուցանեն բարս և ոսլորութիւնս. — Որդին համարի չափահաս, և կառավարէ զտունն, յորդամ կարողն իցէ հնձել զմոտ. Եղբարք սոլորաբար ընակեն ի միասին. թէ բաժանեսցին ի միմեանց, երէց որդին առնու զչայրական տունն, զմի ձի, կամ զմի կով, կամ տասն ոչխար առաւել քան զմիւն. կրտսերն մի մի ընտանի անսատունս և զէնս, առ ի ծախս կամ ի լրումն հարսանեաց պիտոցից. թէ չէ ամուսնացեալ. իսկ մնացորդն բաժանի հաւասարութեամբ ի մէջ որդւոցն:

Ազգականութիւն ի կողմանէ մօր չճանաչի առ սոսա ամենեին. իսկ ի կողմանէ հօր, թէ քոան և աւելի սերունդ հեռագոյն, ձանաչի մերձաւոր, միայն զի կրիսէ զանուն մի և նոյն տոհմին, և ի գէսս սպանմանն, աղգականն նորս կարէ խընդրել զարիւն նորա. իսկ թէ որ սպանցէ զմօրեղբացըն ուրուք, քեռորդին չունի իրաւունս խընդրեց զիրէժն նորա, վասն որոյ առ նոսա թշրիտեալ է ամուսնանալ ընդ ամենամերձ աղգականըս, որ ի կողմանէ մօր. զօ. որդին կարէ տանուլ ի կնութիւն զմօրաքոյրն իւր ելն. իսկ առնուլ կին ի նոյն ցեղէ, զօրոյ անունն կրէ ինքն. իցէ թող միանգամայն հիսի յարենակցութենէ, զոր-

ձեալ համարի աններելի և ապականութիւն արեան:

Վերպարան Օսոեթաց, զիբք մարմնոց և հասակ նոցա միանգումայն որոշէ զնոսա ի զրացեաց նոցին, միւս ազգաց Պովիանու, և մանսու անդ ի Վրաց. վերջինքս բարձրահասակք են, բարեկազմք, թիւամորթք, վայելչաղիտակք, զեղեցկադէմք, աղնուատենք, սևակն, սևաչեր, նրբաշութեալն, արծուաւնկն, և զշամանգամայնն ասացից, առաջնորդն ի զեղեցկազյն ցեղս երկիր. իսկ Օսոեթք ընդհակառակն՝ պնդակազմք մարմնով, և անախորժ տեղեամք. հասակաւ սակաւ երրէք բարձր քան զհնուգ ոտնաշափ, և չորս մատնաշափուս. լանագէմք, կոպտահերք, և խաժակնեացք. կանայք նոցա փորբահասակք, և դուն ուրիք ի նոսա զեղեցիկք. կերակուր նոցա է հաց անիմոր ի ցորենուց կամ գարուց թրեալ ի մասիր, և միա վայրենի թուշոց կամ կենդանեաց. զի զրեթէ ոչ երրէք ուտեն զմիս եղին, ոչխարի, և այծու, տարագ զգեստու նոցա առեալ է ի 2երքեղաց, ոյլ ոչ յարմար տղեղատեսիլ մարմնոց նոցա. սիրեն և ի կիր առնուն զգէնս, և ըստ զուղոյն ի վերայ սուսերաց և հրացանից Լատին զրոց երևի, զի բազումք ի նոցանէ մնացեալք են ի ժամանակաց ամբապիտութեան Գենուացւոց:

Ժողովուրդն Օսոեթաց բաժանի յերկուս կարզու յազնուականս և ի շինականս. աղնուականք ուշնին բարելաւ և անդորր կեանս, ոյլ ոչ զքաղաքական արտօնութիւնս. պատմազիրք Վրաց աւսեն լինել եօմն նշանաւոր տոհմից աղնուականաց սոցաւ. — Ի հիւսիսայինն Օսոեթիա գտանի առանձին աղնուական տոհմ բաղացեալ յերկոտասան տանց անուանելոց ութագութիւն զիւղական ժառանգական աւագութեան, որպէս և առ Հայու առնեն խնամութիւն ընդ իշխանս 2երքեղաց. զի թէ ընդ անշան անձինս իցէ խնամութիւնն, ծընեալն յամունութենէ անսերտւոդ կեաջ համարեալ է ըստ Օսոեթաց ծառայ, այն է թէ կարուսանէ զազնուութիւն իւր վասն որոյ զգուշան յոյժ պահպանել զառանձնութիւնն տոհմիւն իւրեանց

(*) Իթէ սոսուզիւ. Օսոեթք յառ ոչ եկեալ են ի հիւն Արտասաց, այն է յԱմազանաց, որք միացան ընդ ցեղին Ակերացւոց, և ըստ կարձեաց Հերոդոտուս կազմեցին նոր տաճանձին, դիւրին է ուրեմն կանանց իշխան արանց իշխան արանց իւրեանց, թէ և առանց Ամազանունիս լինելոյ ևս կարեն անել դաշտ իշխանութիւն:

Օրէնք և սովորութիւնք վրէժինդրութեան
արեան տեսանի յամենայն արև ելեան և հիւսի.
սային Եւրոպական ազննս, այլ ջերմագցն ի սու-
սա, Եթէ ոք սպան զոմն, արենակիցք և ազգա-
կիցք նորա ոչ միայն ունին իրաւունս, այլ և
պարտին առնուլ գրէժ նորա, կամ զնա ինչն
զոճրագործն, կամ զմի յընտանեաց նորա սպա-
նանեղով. և յետ սպանմանն, երթան ի գերեղ-
ման արենակիցն իւրեանց և ասեն. «առաք
զբրէժ արեան քո», : Թէ ոք սպան զոմն ի նշա-
նաւոր տոհմէ, զամն ողջոյն շեղանէ արտաքս ի տա-
նէ, զի տունն համարեալ է անմերձենալի պա-
տրսպարեան. և որ չունի զանգհական տուն, զի-
մալ մասնէ ընդ հավանաւորութեամբ այլոյ նը-
շանաւոր տան կալով ան էն զամն ինչ ի ծառա-
յութեան, Պատմեցին ինձ. թէ ի վաղ ժամա-
նակաց հետէ ընդ մէջ երկուց անուանի տոհմից
Օսսեթաց ծագեալ էր թշնամութիւն մեծ, յորմէ
և վրէժինդրութիւն արեան, և գրեթէ երկորին
տունքն ևս ջնջեցան, մինչև հաւանեալ երկոցուց
եսուն զմի մի որբս յիւրաքանչիւր կուսէ, և հան-
եալ զնոսա ի զօհ ի վերայ կուապաշտական սեղա-
նց իւրեանց, ապա հաշտեցան. — Օրէն է սոյն-
պէս հատուցանել զիին արեան սպանեցն, որ
զանազանի ըստ այսմ. Հայր կամ տէր գերդաս-
տանին՝ արժէ առաւել քան զամուրին. և ազ-
նուականն՝ կրկնապատիկ քան զինականն. սա-
պէս յատկացեալ են զինք զանազան անդամոց
մարմնոյ ըստ կարերութեան նոցին. զօ. այլ է
զին զինոյն վիրաւորելց կամ վեասելց. այլ ա-
շաց այլ ձեռաց, այլ ոտից, և լի. բացեալ վերք
մարմնոյ չափին դարեհատիւ. և ասի. «Աերըն
ունի 10 հատ յերկայնութիւն, այսքան ի լոյնու-
թիւն, և լին. և չարագործն վասն իւրաքանչիւրց
հատի վճարէ զորոշեալ զին. բաց աստի՛ զյ միւս
ևս եղանակ վրէժինդրութիւն կամ առնոյ
զբաւականութիւն ի թշնամուցն, այն է մենամար-
տութիւնն. մանաւանդ յորժամ զրկեալն տնանկ
կամ աննշան ոք է, պահանջէ ի զիմաւորէն հա-
նել բռնութեամբ զմարդասպանն ընդ իւր յառ-
պարէզ մարտի. օր որոշի նայա, տեղի. և հետա-
ւորութիւն քայլից ի միմեանց. միով հարուածով
կամ հրացանիւ միանուագ արձակմամբ գործն

առնու վախճան. թէ վիրաւորի յանցաւորն, թէ
մեռանի, կամ թէ բարօպալին զերծանի ի վասու-
ցն, ոչ այնուհետև պահանջի ի նմանէ վրէժ.

Թէ վէճք ծաղին ի մէջ երկուց անձանց զկա-
լուածոց և պղոց սեպհականութեանց, ընդ վճուով
են զիմաւորին նոցա. թէ արտաքս շինին զողա-
ցաւ ինչ ոք յայտնապէս պարտաւորի կամ ըզ-
գողանն դարձուցանել, կամ ընդ այնք հատուցա-
նել զահմանեալն արժէք. իսկ թէ թաքնաբար
և իմանի, հինգ անդամ առաւել քան զարժէսն.
զողութիւն կամ յափշտակութիւն ի մէջ զեղջ
պատժի ևս խստագցն. իսկ որ արտաքս շինից
աւաղակութիւնն չզրի ի մեզս, միայն թէ ի յայտ-
նին զրկեալն կարէ պահանջիւլ և առնուլ զինչս.
առած է Օսսեթաց. «որ ինչ գտանեմք ի վերայ
ճանապարհին, յևսուուծոյ է առաքեալ, » —
Յափշտակորդն յետ հասուցանելց (թէ յայտնի
եղէ) զյափշտակիալն, պարտի նա և հացկե-
րցմս տալ համօրէն զերդաստանի այնք, որ իբրն
են գորացեալք. և այս ճանաչի փոստ յայտնա-
զցն, որով անկարանայ հակառակորդն ուրացնալ
զստացումն իրաց, կրկնն պահանջիւլ ի նմանէ: —

Առ սոսա պահպանի խստիւ և օրէնք հիւրըն-
կալութեան. որպէս առ համօրէն Կովկասիան
ցեղ, տանուտէրն՝ որոյ ընդ յարկաւ գոտանի ոք
զինչս և զանձն իւր անդամ զնէ ի պաշտպանու-
թիւն հիւրցն. սպանանել կամ վեասել զիւրն,
նյն է որ ինչ սպանանելն զազգականս, վասն ու-
րց և մի և նոյն օրինօք առնուն զբրէժ ի թշ-
նամեաց. և այնչափ խիստ է այս օրէն, զի թէ
Օսսեթ ոմն ընկալու ի տուն իւր զանձանօթ ոք
և ապա զիտոց թէ նա թշնամին է իւր յորմէ
հարկ էր նմա զբրէժն առնուլ արեամբ, որչափ
ի տան իւրում է, պարտի մեծարել զնա ուրա-
խութեամբ. այլ ի մեկնին ի տանէ, յորժամ հ-
լեալ արտաքս քան զզեօղն, ասէ, «Այժմ պահ-
պանեա՛ զքեզ, թշնամի եմ քո», :

Միրեն սոքա և յարգեն յոյժ օրպէս առացաւ՝
զծնող իւրեանց, զնակինիս, և միանգամցն իսկ
առել զաւագազցնան. ամենկիլին հնազանդին իշ-
խանութեան և հրամանի զիմաւորի զերդաստ-
անին, հօր, հօրեղբօր, եղբօր, ելն, ի զտանիլ սոցա
ի տեղուջ ուրեք, կրտսերքն ի նոցանէ ոչ երբէք

նօտին, ոչ համարձակեն բարձր ձայնիւ. կամ բանս ընդգէմ նոցա խօսիլ. բայց նշանաւորն ի սոսա և Եւրոպական սովորութիւն մի, զոր չունին աղլ աղլք Առվիասու. այն է, ի ցցց պատուց և մեծարանաց, արք բանան զզբուխս իւրեանց, և երբեմն համբուրեն զձեան հօր կամ այլ պատկասելի անձին. իսկ կանայք յոտին յառնեն եթէ նատեալք իցեն:

Զհայրասովանն պատժեն չարաչար, այն է փակիալ ի տան նորին այրեն զնա. երդնուլ ի զերեզման նախնեաց սուրբ համարի. եթէ կամակոր զրկողն յանձն չառնու տալ որ և իցէ կերպիւ բաւականութիւն զրկեցն, վերջինս սպառնայ չարչարել զհողիս նախնեաց նորա: —

(Մասցեան է յետագոյա)

ԱՐԻԱՏԱԿԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԴՐԱԿԱՆԱՆ.

ԲԱՆԱՍՏԵՐԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՈՒՅՈՒՑՉԵՒ ԽՆՔՆԱԿԲԹՈՒԹԻՒՆՔ.

(Է ԷՌԵՆ ՀԱՅՐԵՆ):

Ի.

Վի ուրիշ հարց, որ մենք խորհուրդ կոսյինք ուսուցչին շուտ շուտ կրկնել ինքըն իրան, այն է «ունիմ» ևս արդեօք ոյժ և ընդունակունեն իմ զործիս համար . . . — նոյնպէս կարեւոր է ուսուցչի անձնակիթութեան, որովհեան այդ հարցը կարող է նորա միտք զցել, թէ ի՞նչ է պահանջում իրանից ուսուցչութիւնը, և ապա ուրիշն կծաղեցնէ նորա մեջ նոնադունեայ պատրաստունենելը իւր սկարտականութիւնները արժանապէս կատարելու համար և կզարթեցնէ նորա մեջ վըճողութիւն որդուն կարելլ է կադարձելութելլու: Մենք ասացինք, որ զորա համար հարկաւոր չէ հանձարեղ լինել:

Ի հարկէ մարդիք զանազան ձիբքեր են ունենաւմ. բայց իւր գործին անձնատուր աշխատաւորն առաւել օգաակար զործ կտեսնէ, քան թէ հանձարեղ ծոյլը: Խոռ հական ուղղութիւն ստացած անձնակը թութիւնը կտայ ուսուցչին լրջմառութիւն և կիրկէ նորան թեթեամիտ ինքնահաւանութիւնից, նա այլ ևս չե կանգնիլ իւր յառաջաշարժութեան մէջ և վերջացրած չի համարիլ իւր պատրաստութիւնը, նորա համար էլ մենք խորհուրդ կտանք ուսուցչին շուտ — շուտ մտարել ուսուցչի կոչուն գաղափարը, մտարել իւր, թէ ի՞նչ պահանջմանք ու պայմաններ է առաջարրում ուսուցչի էրեւլ:

Կարելի է ցցց տալ նորան զիմելու ձանապարհն ու միջոցները, բայց այդ ձանապարհով գնալ և օգուտ քաղել այդ միջոցներից՝ ուսուցչի իւր պարտքն է:

Ուրիշն թող յաճախ մատածէ ուսուցիչը թէ ի՞նչ է հարկաւոր նորան ըստ գաղափարին առաջարկել լիւելու համար: Եյս է սկիզբն անձնակիթութեան: Ամենից առաջ, թող շմուանայ ուսուցիչը, որ նորա գործը չէ վերջանում միայն ուսումնատութեամբ, դա միայն ֆլոցն է, իսկ նպատակն է կենդանի մարդկային անձնաւորութիւն կը նելլ: Թող ուրիշն իւր բոլոր զործողութիւններին — յարաբերութիւններին տայ նա էրեւողական բնաւորութիւնն թռող երբեք շմուանայ ուսուցիչը և այն, որ նա կրթում ու ուսուցանումէ ոչ թէ միայն դասատան մէջ իւր կարդացած խօսած ու գործածով, այլ կրթումէ նաև ուսուցանում իւր բոլոր կեանքովը, բընաւորութեամբը և առհասարակ զործողութիւններով, թէ իւր արտաքին կեն-